ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ԴՈԿՏ.-ՊՐՈՖ. ՎԱՉԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ»-Ի ՏԻՏՂՈՍ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՌԹԻՎ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ
ՊՐՈՖ. ՎԱՉԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան պրոֆեսոր,

Ուրախացանք շատ, տեղյակ դառնալով, թե այս տարի Ձեզ է շնորհվել «Մեսրոպ Մաշտոցյան մրցանակի դափնեկիր»-ի տիտղոսը, որ մեր երկրի բարձրագույն գնահատականն է հանդիսանում բանասիրական գիտությունների բնագավառում:

Սրտանց հրճվեցինք, որովհետև իրապես Դուք արժանի եք այդ մեծ գնահատանքին՝ Ձեր մատուցած բացառիկ ծառայությանց համար մեր օրերի հայ մատենագիտության: Մենք հատկապես կամենում ենք Ձեզ շնորհավորել և Մեր ամենաջերմ գնահատանքը հայտնել «Հայոց կանոնագրքի» երկու հատորների և այլ գիտական հրատարակությանց համար: Ձեր այս աշխատությունները կոթողային գործեր են, որոնք գալիս են մնայուն արժեքներով հարստացնելու մեր ժամանակաշրջանի բանասիրության հայոց գանձարանը:

Օրհնություն Ձեր գործին, օրհնություն Ձեր վաստակին:

Մաղթում ենք Ձեզ կայուն առողջություն և ստեղծագործ աշխատանքի նոր եռանդ՝ շարունակելու համար Ձեր լուսավոր ճանապարհը նույն արդյունավետությամբ:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով»՝

ՎԱՉԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

12-ը դեկտեմբերի 1974 թ.,
Ս. Էջմիածին